Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИМЕНИ В. БРЮСОВА
BRUSOV STATE UNIVERSITY

ԲԱՆԲԵՐ
Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ВЕСТНИК ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА ИМЕНИ В. БРЮСОВА
BULLETIN OF BRUSOV STATE UNIVERSITY

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ЛИНГВИСТИКА И ФИЛОЛОГИЯ

LINGUISTICS AND PHILOLOGY

1(68)

Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
«ԼԻՆԳՎԱ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ - 2024

ՀՏԴ 81՝373
DOI: 10.51307/18293107/laph/24.68-47

ՄԵՂՄԱՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՊՏԱՍՈՒԹՅՈՒՆ. ԽՈՍՔԻ ԱՐՏԱՀԱՅՏՉԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

ՍՈՒՍԱՆՆԱ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Համառոտագիր

Սույն հոդվածի ուսումնասիրության առարկան բովանդակում է շարահյուսական բանադարձումներից երկուսի՝ մեղմասության և կոպտասության քննությունը. դրանք ոճական-արտահայտչական յուրահատկություններ և հնարավորություններ են դրսևորում խոսքային և միջանձնային հարաբերություններում, հաղորդակցության որոշակի ոլորտներում, մասնավորապես՝ բժշկական, տնտեսական, պետական-քաղաքական, ռազմական, դիվանագիտական, մանկավարժական և այլն: Մասնագիտական տարբեր բնագավառներում գործածվող քողարկված մեղմասույթները ընկալելի են հաղորդակցվող կողմերի խոսքային համատեքստում:

Ուսումնասիրության նպատակը վերլուծական-համադրական մեթոդների համատեղմամբ վերոհիշյալ արտահայտչամիջոցների կարևորության քննությունն է՝ դրանց գործառական նպատակաուղղվածության առումով: Խնդրի արդիականությունը պայմանավորված է մի շարք գործոններով՝ կիրառական առանձնահատկություններ և հաճախականություն, արտահայտչական հնարավորությունների ներգործունություն: Դրանք առանցքային նշանակություն ունեն ժամանակակից լեզվական հաղորդակցական մակարդակը գնահատելու և միտվածությունը բնութագրելու տեսանկյունից:

Քննարկվող հարցի առաջ քաշած դրույթները սերտորեն պայմանավորված են ինչպես հաղորդակցման լեզվական ավանդույթով (լեզվական տաբուի հաղթահարում և այլն), այնպես էլ արդի խոսույթում վերապահված գործառույթով՝ հարցի քննարկման առանցքում ունենալով դրանց՝ նորմալ պայմաններ ապահովելու նշանակությունը:

Մեր աշխատանքում մեղմասությունը քննարկվում է բառային, բառակապակցության, դարձվածքային, նաև շարահյուսական ոճագիտության մակարդակներում: Կոպտասությունը ոլորտային գործառությամբ թեև ավելի սահմանափակ է, սակայն դրա կիրառության հաճախականությունը մեծ է մեր օրերում, որը թելադրված է սոցիալ-

հասարակական, քաղաքական, տեղեկատվական միջոցների փոփոխություններով՝ թվայնացված դարաշրջանի ընձեռած հնարավորությունների շրջանակներում:

Հիմնաբառեր՝ *մեղմասություն, կոպտասություն, հուզաարտահայտ-չականություն, գործառույթ, արտահայտչական միջոցներ և նպատակներ, կիրառության ոլորտներ*

Ներածություն

Մեղմասության և կոպտասության արտահայտչական հնարավորությունները մեծ են. դրանց դրսևորումները խոսքում արդիական են և գործառական ներուժությունը մեծ է: Ոճական այս բանադարձումները սերտորեն առնչվում են լեզվական պրագմատիզմի խնդրին, քանզի կիրառություններում մի բառի, բառակապակցության, շարահյուսական միավորի՝ մեկ այլ բառով, արտահայտությամբ փոխարինելու հարց չէ սա միայն, այլ հաղորդակցման պայմաններով և հանգամանքներով պայմանավորված իրադրական լուծում՝ բարեկիրթ և ոչ բարեկիրթ, վայելուչ և ոչ վայելուչ խոսքի տարբերակման համատեքստում:

Հայ լեզվաբանները անդրադարձել են մեղմասություն երևույթին, տվել են դրա գնահատականը խոսքի ոճավորման, յուրահատկությունները բացահայտելու և գնահատելու տեսանկյունից, սակայն կոպտասությանը գրեթե չեն անդրադարձել:

Մենք փորձել ենք մասնակիորեն լրացնել այդ բացը:

Եզրակացություն

Որպես ամփոփում մեր զուգադրական-համեմատական քննության՝ կարող ենք եզրակացնել, որ մեղմասույթները երևույթները հիմնականում քողարկելու, մեղմ ներկայացնելու, իսկ կոպտասույթները, ընդհակառակը, դրանք հաճախ խեղաթյուրելու, բացասական ընկալումներ և տրամադրություններ ձևավորելու (մանիպուլյատիվ վարքագիծ) ոճական հնարանքներ են, որոնք արդի խոսույթի ընդհանրական բնութագրի կարևոր բաղադրիչներից են:

Մեկ դիտարկում ևս. մեղմասության ընկալման սահմանները խիստ հարաբերական են: Այսպես՝ հասարակական զարգացման մի փուլում որպես մեղմասություն ընկալվող բառը, արտահայտությունը կարող են տարակերպ հասկացվել մեկ այլ միջավայրում. այստեղ, ժամանակային գործոնից բացի, կարևորվում է նաև խոսքային միջավայրը:

Ի դեպ, մեր ժամանակներում տեղեկատվական տեխնոլոգիաների համընդհանուր հասանելիությանը և տարածմանը զուգահեռ համացանցը

առավել է նպաստում կոպտասության խոսքային ազդեցության շրջանակների ընդլայնմանը հանրային կյանքում և միջանձնային հարաբերություններում, որտեղ հաճախ շրջանցվում և խախտվում են խոսքային էթիկայի պահանջները:

Կոպտասությունների կիրառությունը նպաստում է հասարակության մեջ բացասական տրամադրությունների գեներացմանը, որը հաճախ վերածվում է ատելության խոսքի:

Խոսքի մշակույթը հաղորդակցական-գործառական նշանակություն ունի, փոխկապակցված է գրական լեզվի նորմերին և փոփոխվում է դրանց համապատասխան՝ միտված լինելով սեղմ, ճշգրիտ, բազմազան, մատչելի, տրամաբանական, արտահայտիչ խոսք կառուցելու նպատակադրմանը: Որպես լեզվական դիսցիպլին՝ խոսքի մշակույթը միավորում է հետևյալ հիմնական դրույթները՝ նորմավորում, հաղորդակցում, էթիկական նորմերի պահպանում. վերջիններս պայմանավորված են հաղորդակցական ավանդույթներով կամ որպես այդպիսիք գիտակցվող պատկերացումներով և հասարակական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց ձևային և բովանդակային փոփոխություններ և առանձնահատկություններ են դրսևորում:

Խոսքին արտահայտչականություն և հուզականություն հաղորդող ոճական բանադարձումների բազմազանության մեջ առանձնանում են մեղմասությունը (euphemrism) և կոպտասությունը (disfemism). սրանք ոճական հնարանքներ են, որոնք խոսքի կառուցման, բառերի գործածության, շարահյուսական յուրահատկություններ են դրսևորում՝ գործածվելով հաղորդակցության որոշակի ոլորտներում: Լեզվաոճական տարբերակված այլատեսակներից յուրաքանչյուրը, հիմնական գործառույթից բացի, հավելյալ նշանակություն և երանգներ է հաղորդում ասելիքին:

Սույն ուսումնասիրության նպատակը արտահայտչական այս միջոցների զուգադրական, վերլուծական, նկարագրական քննությունն է:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է որոշակի հանգամանքներով. դրանք են՝ ժամանակակից խոսույթում կիրառական հատկանիշներ և հաճախականություն, գործնական նշանակություն: Վերոհիշյալ գործոնները ամբողջության մեջ բնութագրում և առնչվում են արդի լեզվական-հաղորդակցական իրողություններին և միջավայրին:

Հայ լեզվաբանության մեջ անդրադարձներ եղել են մեղմասությանը, սակայն կոպտասությունը՝ որպես ոճական միջոց, ուսումնասիրողների կողմից անտեսվել է, թեև վերջին ժամանակներում՝ մասնավորապես մեր օրերում, դրա գործածականությունը նկատելիորեն

մեծացել է, որին նպաստել են սոցիալ-հասարակական, քաղաքական կյանքի զարգացման բովանդակային փոփոխությունները, թվայնացված դարաշրջանի տեղեկատվական հաղորդակցման ընձեռած հնարավորությունները:

Հոդվածի շրջանակներում մենք կանդրադառնանք դրանց գործառույթներին, թեմատիկ դրսևորումներին. սրանցից յուրաքանչյուրի՝ մասնավորապես մեղմասության կիրառությունը չի սահմանափակվում միայն բառային, բառակապակցության, դարձվածքային մակարդակներով: Շարահյուսական ոճաբանության մեջ կրավորական սեռի մեղմասութային կառույցներին քաղաքական խոսույթի բովանդակային պլանում իմաստազատող գործառույթ է վերապահվում:

Եվ այսպես՝ Էդ. Աղայանը գրում է. «Էվֆեմիզմ է կոչվում «անքաղաքավարի» կամ «անհարմար» համարվող բառերի փոխարինումը նորերով» (1967, էջ 300):

Ոճաբանական բառարանում երևույթը բնութագրվում է այսպես. «1. Տհաճ, կոպիտ բառերի և արտահայտությունների փոխարինումը վայելուչ համարվող հոմանիշներով: 2. Այնպիսի բառերի գործածություն, որոնք նվազեցնում, մեղմացնում են բացասական, անվայելուչ համարվող հատկանիշները» (Խլղաթյան 2000, էջ 39-40): Այսինքն՝ բառը կամ բառակապակցությունը խոսքային իրադրության պայմաններում փոխարինվում է իմաստով զուգադրելի միավորներով՝ հնարավորություն ստեղծելով բովանդակային և ոճական լրացուցիչ նրբերանգներ հավելելու, նաև բարձրացնելու խոսքի բարեկրթության մակարդակը: Եվ ընդհանրապես, սա մի բառը կամ արտահայտությունը մյուսով փոխարինելու, քողարկելու կամ մեղմացնելու ինքնաբերական գործողություն չէ, այլ լեզվական պրագմատիզմի դրսևորում, որի միջոցով գործնականորեն ցանկալի վերջնարդյունք է ակնկալվում՝ գնահատելով խոսքի արտահայտչական իրական հնարավորությունների, կիրառական խնդիրներ լուծելու նպատակաուղղվածության տեսանկյունից:

Մեղմասությունը կախման մեջ է դնում խոսքը հաղորդակցման նպատակներից և պայմաններից, քանզի տվյալ սոցիալական միջավայրում և իրադրությունում այն կարող է համարվել ոչ պատշաճ, բարեկիրթ առարկան կամ երևույթը ուղիղ անվանելու համար (ի դեպ, ասելիքի քողարկված իմաստը համատեքստում շատ հաճախ մտովի ընկալելի է):

Այնուամենայնիվ, նկատենք, որ մեղմասութային գործառույթները սահմանափակվում են միայն որոշակի երևույթների, առարկաների, ոլորտների և մարդկային փոխհարաբերությունների գնահատումների պատեհությամբ, այլ պարագաներում դրանք չեզոքություն են հանդես

բերում: Ավելին՝ հաղորդակցման միջավայրից կախված՝ որքան խոսքի վերահսկողությունը և ինքնավերահսկողությունը խիստ է, այնքան մեղմասության ի հայտ գալու հավանականությունը մեծանում է: Հակառակ պատկերը սոցիալական ցանցերն են՝ խոսքի անվերահսկելիության ծայրահեղ դրսևորումներով: Մի հանգամանք ևս. հասարակական զարգացման մի փուլում մեղմասութային համարվող բառը, արտահայտությունը կարող է այդպիսին չընկալվել այլևս. բացի ժամանակային գործոնից՝ կարևորվում է նաև սոցիալական միջավայրը. բարեկրթության և ոչ բարեկրթության հասարակական ընկալումների տեսանկյունից տարակերպություն կա:

Առանձնացվում է մեղմասության գործածության երկու որոշակի նպատակ. «ա) Մեղմասության ենք դիմում նախ և առաջ խոսքի առարկայի իրական բնութագիրը կամ անվանումը պարկեշտ կամ ոչ կոպիտ հնչեցնելու, հաղորդակցումը բարեկիրթ մակարդակում պահելու նպատակով... բ) Մեղմասությունը գործածվում է երևույթի բուն էությունը քողարկելու նպատակով» (Ավետիսյան 2015, էջ 70):

Հասարակական և միջանձնային հարաբերություններում մեղմասությունները հաղորդակցվելիս անպատշաճությունից իմաստային այլ՝ համեմատաբար մեղմ և այլ կերպ, այսինքն՝ բառի ուղիղ և անվանողական արժեքին հավասար նշանակություն ունեցող լեզվական միավորով փոխարինելու հնարավորություն է տալիս՝ կույր (տեսողությունից զուրկ), խուլ (լսելու ունակությունը կորցրած), սխալ (ոչ ճիշտ), հաշմանդամ (շարժողունակությունը կորցրած), գեր (խոշորամարմին), տգեղ (արտաքինի հարցում բախտը չի բերել) և այլն:

Առարկաների, երևույթների՝ գրական և ժողովրդական լեզվամտածողությանը բնորոշ (բարբառային, խոսակցական բառեր, դարձվածքներ) գնահատողական-զգայական տեսանկյունից բնութագրվող մեղմասությունները՝ բարեկրթության և անբարեկրթության տարանջատումով, լեզվական տաբուի հաղթահարման կամ առարկայի, երևույթի քողարկման արտահայտչական-գործառական առանձնահատկություններ են ցուցաբերում և հաղորդակցման մեկ այլ իրավիճակում կարող են որպես այդպիսիք չընկալվել. օրինակ՝ մարմնավաճառ՝ գիշերային թիթեռնիկ, հետերա, ի նոցանե, փողոցային պչրուհի, սոցիալական ցածր պատասխանատվություն ունեցող, սիրո քրմուհի, բարոյական օրենքներից զուրկ և այլն, կամ՝ բիճ (բրբ.)՝ ապօրինածին, անմեղ-մեղավոր (գրք.), ընկեցիկ և այլն, նաև՝ հղի՝ պատճառավոր, ծոցվոր, տղոցկան, մացուկ, ծանր ոտք և այլն:

Ի տարբերություն հոմանշային հարաբերության մեջ գտնվող բառերի՝ մեկը մյուսով փոխարինելու ընդհանրական բնույթ կրող

գործառությանը՝ որպես մեղմասություններ հանդես եկող միավորները ընդունելի կամ անընդունելի լինելու հասարակական պահանջին են ենթակա: Մեղմասությունների դրսևորման այս յուրահատկությունները թույլ են տալիս անդրադառնալ շատ ավելի զգայունություն ունեցող թեմաների՝ պահպանելով հասարակական հարաբերություններում թույլատրելիության նորմերը: Այս առումով մեղմասությունը կարելի է կոչել երկիմաստ նշանակություն ունեցող խոսք՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ խոսքային տարբեր միջավայրերում այն կարող է ունենալ ոչ միանշանակ ընկալում (Зверева 2008, с.217-219):

Հարցի պատմությունը ձևավորվել է դեռևս հնագույն դարերում: Բոլոր ժամանակներում էլ եղել են թեմաներ, որոնք չեն հանրայնացվել կամ քննության ենթակա չեն եղել, և խոսքում դրանց հիշատակումն իսկ պարկեշտ, բարեկիրթ չի համարվել, ուստի և տաբու (արգելք) է դրվել բառի գործածության վրա, որի խախտումը, ըստ սնոտիապաշտական պատկերացումների, կարող էր պատժվել գերբնական ուժերի կողմից և բացասական հետևանքներով հակադարձվել այն հիշատակողին: Ի դեպ, հասարակական գիտակցության մեջ ամրագրված ժամանակակից բազմաթիվ մեղմասություններ սոցիալական, քաղաքական և կրոնական տաբուների արդյունք են: Մեր օրերում լեզվական տաբուի պատճառ կարող է համարվել գրաքննությունը՝ հատկապես ռազմական, քաղաքական-դիվանագիտական ոլորտներում:

Այսպես՝ համաձայն հին հավատալիքների՝ պետք էր խուսափել կամ զգուշանալ մահվան, վտանգավոր երևույթների, հիվանդությունների մասին ուղղակի հիշատակումից, քանզի մեր նախնիները գերբնական էակների, երևակայական ոգիների գոյության հաստատուն համոզմունքն ունեին: Սնոտիապաշտական նախապաշարումներից բխած կանխակալ այս պատկերացումները կարգավորում էին մարդկային համակեցությունը:

Աիավասիկ՝ Սատանա (կրոն.), Սադայել, չարք (սնոտ.), դև (հնց.), չարասկիզբ, խորամանկ, փործասեր, շեյթան (գվռ.), մեզնից լավերը, մեզմեն աղեկները, սև վարդապետ (անձնավորված չար ոգի), գրող (երևակայական չար ոգի, որ մարդկանց մահ է բերում), իբլիս և այլն: Կան նաև դարձվածքային տասնյակ տարբերակներ՝ սատանիականջը խուլ, սատանան տանի-գրողը տանի, սատանի բաժին-գրողի բաժին (դառնալ) և այլն (Սուքիասյան 2003, էջ 983):

«Սատանա» բառը զուգակցվում է տգեղության, չարամտության, անազնվության, խաբեության, խորամանկության, նենգության, ճարպկության, չարաճճիության և այլ հատկանիշների հետ, որոնցից յուրաքանչյուրը, իմաստային նրբերանգներից բացի, ունի նաև

արտահայտչականորեն տարբերակվող վերաբերմունք, որը այս կամ այն չափով անդրադարձնում է խոսողի անհատական-հուզական գնահատականը առարկայի նկատմամբ:

Ամեն մի ժողովուրդ իր կրոնական հավատալիքների մեջ չարի և բարու սեփական ըմբռնումներն ունի և հոմանշային մերձիմաստ բառախմբերում ոճական արժեք և արտահայտչականության հնարավորություն ունի յուրաքանչյուրը՝ կիրառական տարբեր հաճախականությամբ և նկատելի *այլափեսականությամբ* կամ երկուսով էլ:

Թեմատիկ առումով մեղմասությունների կիրառումը կարելի է բաժանել անձնական և սոցիալական կյանքին վերաբերող ոլորտների:

«Մահ» և «մեռնել» հասկացությունների վրա դեռևս հնուց տաբու էր դրված. այս թեմայով մեղմասությունները բնույթով ավելի զգացմունքային են և հոգեբանական առումով արտահայտչական պլանում փորձում են մեղմացնել, վերստին ցավ չպատճառել հարազատի կորուստը վերապրողին՝ ընտրություն կատարելով մարդու ճանաչողական և արժեքային համակարգի մաս կազմող ընկալումների և մտածումների միջև:

Առանձնացնենք «մեռնել» բառի տասնյակ հոմանշային բառերից և դարձվածքային արտահայտություններից մի քանիսը միայն՝ ոճականորեն չեզոք, դրական և բացասական ընկալումներով՝ ննջել, հանգչել, սատկել (անարգ.), (գվռ.)՝ պակսել, խատել, մահկանացուն կնքել (գրք.), հոգին ավանդել (փչել), հոգին Աստծուն տալ, աստղը (արևը) խավարել (մարել), մյուս աշխարհ գնալ, հոր տուն գնալ, Աստծո (տիրոջ) հույսին մնալ, փալաս-փուլուսը հավաքել, կարմիրը կապել, ոտները մեկնել (տնկել, երկարացնել), գրողի ծոցը գնալ, շանսատակ լինել, կյանքը հայրենիքի զոհասեղանին դնել, գնալ ի վերին Երուսաղեմ, երկնային հոր արքայությանն արժանանալ, հավերժական (հավիտենական) քնով քնել, հավերժի ճամփորդ դառնալ և այլն:

Կենսափիլիսոփայությունը, որ խտացված է դարձվածքային կայուն, փոխաբերական-այլաբերական իմաստ արտահայտող այս միավորներում, ոչ միայն մարդու ֆիզիկական չգոյության, այլև երևույթին զգայական-հոգեբանական գնահատանքներ տալու մասին է, որոնց նախընտրությունը խոսքում կարող է և՛ մեղմել, և՛ կոշտացնել հաղորդակցական իրավիճակը: Ըստ որում, դարձվածքներով արտահայտված մեղմասությունները (նաև՝ կոպտասությունները) ավելի պատկերավոր են և սոցիալ-մշակութային կյանքի (կրոնական, էթնիկական, կենցաղավարության և այլն) տեղեկություն են պարունակում՝ իմաստային և գործառական հետաքրքիր դրսևորումներով՝ «դատարկ

տակառ» (պոռոտախոս, մեծաբերան մարդ), «բերանը յուղոտ պատառ գցել» (սիրաշահել, կաշառել), «իրենով անել» (յուրացնել), «երեսի մեռոնը գնալ (կամ թաքնվել)» (խսկց.)՝ ամոթը, պատկառանքը կորցնել, «տանձի պոչ (կամ կոթ») (խսկց.)՝ ապուշ, տխմար, «խաչ ունի՞» (խսկց.)՝ անսիրտ, անխիղճ մարդ», «ծամ/ը կտրած» (անբարոյական, թեթև վարքի տեր), «մատաղ լինել» (զոհվել, նահատակվել) և այլն:

Լեզվական որոշ միավորների իմաստածևային փոխհարաբերությունների պայմաններում որևէ բառի, արտահայտության՝ մեղմասությամբ փոխարինելը սովորաբար դիտարկվում է որպես հոմանշության դրսևորում, սակայն մերձիմաստությանը զուգահեռ երևույթը կիրառական առանձնահատկություն ունի, այն է՝ փոխհաջորդող բառին, դարձվածքին, արտահայտությանը, շարահյուսական կառույցին բովանդակային և գործառական կարևոր դեր է առանձնացվում:

Իբրև լեզվական հնարանք՝ մեղմասույթը երևույթների, առարկաների միջև պայմանական զուգահեռներ անցկացնելու, համադրելու հնարավորություն է ստեղծում, ինչը, անշուշտ, իմաստատարբերակիչ նշանակություն է ձեռք բերում համատեքստում (երևույթը գործուն է հատկապես մամուլում)՝ «Այդ գործողությունները, ինչպես միշտ, բերելու են հայտնի արդյունքին» (վատ, բացասական), «Ապրանքը (թմրանյութը) Հայաստան է ներկրվել օդային ճանապարհով», «Տնօրենի դեմ նյութեր (կոմպրոմատ-վատաբեկիչ տեղեկություն) են նախապատրաստվում» և այլն:

Իմաստային առանձնահատկությամբ պայմանավորված՝ դերանունները՝ այս դեպքում ցուցական և անորոշ՝ որպես լեզվական հնարանք, կարող են մեղմասությային գործառույթ իրականացնել տվյալ խոսքային ենթատեքստում՝ ընդգծելով առարկայի, հատկանիշի և՛ կարևորությունը, և՛ միաժամանակ քողարկելով դրանք՝ դրանով իսկ ակնարկելով այն, ինչի մասին բացահայտ չի ասվում: Անուղղակի կերպով հիշեցվող խոսքը, թեև ամբողջական չէ, սակայն կռահելի է. «Դուք սխալ եք- Դուք այնքան էլ ճիշտ չեք, նա տգետ է- նա այնքան էլ գիտակ չէ այդ հարցում», «Մի՞թե ես ընդունակ եմ դրան (վատ արարք)», «Ձեր միջև ինչ-որ բա՞ն է եղել» (ի նկատի է առնվում սեռական կապ), «Այդ մասին լռում են, այնինչ պետք է խոսել, բացատրել» (սեռական դաստիարակության մասին) և այլն:

Որոշ բառեր և արտահայտություններ իմաստային կանխորոշող նշանակություն են վերագրում կապակցությանը և ձևավորում նոր ընկալումներ: Այսպես՝ որոշակի (ուժեր, ուժային կառույցներ, հայտնի (դեպքեր, իրադարձություններից հետո), համապատասխան (համապատասխան վայրում հայտնվել՝ կալանավայր, ոստիկանական

բաժանմունք) և այլն: Բառային-քերականական միջոցներից գործուն են միջանկյալ բառերը, բառակապակցությունները. «Երևի Դուք պետք է փոխեք Ձեր վարքագիծը», «Միգուցե վերանայեիք Ձեր տեսակետը», «Ցավոք, Ձեր խոսքը համոզիչ չէ» և այլն:

Որպես մեղմասութային լեզվական միավորներ կարող են հանդես գալ նաև հապավումները, տերմինները, օտար բառերը (ի դեպ, հաղորդակցվողների մի մասի համար դրանք կարող են և անհասկանալի լինել)՝ ԼԳՏԲ, ցածր IQ ունենալ (70-ից պակասը մտավոր հետամնացության ցուցիչ է), որոշ մասնագիտությունների վերանվանումները՝ մաքրուհի (հավաքարարուհի), ցրիչ (առաքիչ), քարտուղար (մենեջեր), էսկորդ (ծառայության տեսակ) և այլն:

Իբրև մեղմասություններ հանդես եկող ձևակերպումների ոչ քիչ օրինակներ բառային և բառակազմական մակարդակներում ռուսերենի միջոցով որպես փոխառություններ ներթափանցված բառիմաստային պատճենումներ են, որոնք իմաստով կարող են նույնական լինել կամ մոտ նշանակություն արտահայտել. սրանք հայերենի բառապաշարը հարստացնող միջոցներ են՝ несовместимое с жизнью огнестрельное ранение (կյանքի հետ անհամատեղելի հրածգային վիրավորում), особенный ребенок (յուրահատուկ երեխա՝ շատ հաճախ նյարդային համակարգի ախտահարում ունեցող), солнечные люди (դաունի համախտանիշ ունեցող), непопулярные меры (ոչ համընդունելի միջոցներ), зачистка местности (տեղանքի զտում), человеческие потери (մարդկային կորուստներ), неуставные взаимоотношения (ոչ կանոնադրական հարաբերություններ), гуманитарный кризис (մարդասիրական աղետ, ճգնաժամ), пятая колона (5-րդ շարասյուն) և այլն:

Այս կամ այն ոլորտին բնորոշ մեղմասությունները բազմաթիվ են՝ բժշկական, սոցիալական, տնտեսական, քաղաքական և այլն:

Բժշկական մեղմասույթները հաղորդակցվողներից պահանջում են խոսքային վարվեցողության էթիկական նորմերի պահպանում՝ փոխադարձ շփումների համար դրական-հուզական մթնոլորտ ապահովելու նպատակով: Երկուստեք վստահության համար նրբանկատությունը առաջնային անհրաժեշտություն է՝ հոգեբուժարան (հոգեկան առողջության կենտրոն), ժողովրդագրական աղետ (ծնելիության նվազում), արհեստական բեղմնավորման կենտրոն (վերարտադրողական բժշկության կենտրոն), ուռուցք (նորագոյացություն) և այլն:

Բավական մեծ խումբ են կազմում սեռական հատկանիշներ և հասկացություններ, կողմնորոշումներ, ֆիզիոլոգիական առանձնահատ-

կություններ և գործողություններ, խանգարումներ, շեղումներ, հիվանդություններ, մարդակազմությանը վերաբերող բառերը և արտահայտությունները. սրանց մի մասը արտահայտչական տեսանկյունից չեզոք բառեր, տերմիններ, բառակապակցություններ են, որոնց իրենց իսկ անունով կոչելը կարող է անպարկեշտություն դիտարկվել խոսքային որոշակի միջավայրում:

Բժիշկ-հիվանդ շփումներում թերահավատության երանգ ունի հետևյալ արտահայտությունը՝ «Եթե հիվանդի հետ բան չպատահի…», ինչը նշանակում է՝ «Եթե հիվանդը չմեռնի…»:

Տնտեսական բնագավառում գործածվող մեղմասություններից են՝ օպտիմալացում (կրճատում), տնտեսական ճգնաժամ, սանկցիաների (պատժամիջոցների) կիրառում, մարդասիրական աղետ, ռուբլու անկում, բացասական դինամիկա, դրամի արժեզրկում և այլն:

Քաղաքական, նաև ռազմական գործունեությանը վերաբերող մեղմասությունները սպասարկում են ներպետական և արտաքին հարաբերությունները և իրենց միտվածության մեջ հիմնականում կա՛մ սքողում են իրականությունը, կա՛մ ավելի բարենպաստ լույսի տակ են ներկայացնում այն՝ ծառայեցնելով որոշակի նպատակների՝ էթնիկ զտում, քաղաքական բլոկադա, սահմանային լարվածություն (միջադեպ), հայելային պատասխան, թշնամու հարձակման չեզոքացում, մեծամաշտաբ ռազմական գործողությունների հավանականություն (վտանգ), հատուկ ռազմական գործողություն, անցանկալի անձ (դիվանագ.) և այլն:

Շարահյուսական մակարդակում մեղմասութային հետաքրքիր գործառույթ է դրսևորում կրավորական կառուցվածքի նախադասությունը, ու թեև հայերենին այնքան էլ բնորոշ չէ այն (ի դեպ, քաղաքական մտքի հարուստ ավանդույթներ ու մշակույթ ունեցող անգլերենում սա առանցքային հարց է), այնուամենայնիվ, ներթափանցել է նաև մեր լեզվական տիրույթ և կիրարկման հաճախականություն ունի հատկապես գիտական, հրապարակախոսական, պաշտոնական ոճերում: Ներգործական բնույթի նախադասության՝ կրավորականի փոխակերպված տարբերակը, չնայած իմաստային նույնությանը կամ մերձավորությանը, արտահայտում է այլ հարաբերություն և նրբերանգ, որոնք առանձնակի են կարևորվում քաղաքական խոսույթում (ի միջայլոց, սա քաղաքական գործչի գիտակցական նախընտրությունն է): Լեզվաբան Պ. Պողոսյանը գրում է. «Կրավորական կառուցվածքի դեպքում վերանում է խոսողի հոգեբանական միջամտությունը իր ներկայացրած պատումի մեջ, ասելիքն ասվում է ուրիշի կողմից, խոսքը դառնում է մի տեսակ

չեզոք, խոսողը կարծես թե իրեն ապահովագրում է պատմածի բովանդակության համար պատասխանատվությունից» (1990, էջ 255):

Հետևաբար, քաղաքական խոսույթում իր գործողությունների՝ գործունեության համար պատասխանատու լինելու հանգամանքի անտեսումը, քողարկումը իրականացնում է կրավորական կառույցի նախադասությունը, որը սովորաբար չեզոք վերաբերմունք է արտահայտում: Քաղաքական գործչի կողմից խոսքում կրավորական կառույցի վրա կենտրոնանալը լեզվի մեղմասութային կիրառության առանձնահատկություններից է. այն թույլ է տալիս չիշատակել գործողություն կատարողին՝ դրանով իսկ նախապես ապահովելով ոչ հարմար թեմայի քննարկման հնարավորությունը: Այստեղ է, որ մեղմասությունն իր հիմնական գործառույթներից մեկն է իրականացնում, այն է՝ դրա միջոցով տեղեկատվության կանխակալ, քողարկված, նաև խեղաթյուրված փոխանցում կատարել:

Խնդիրը հետևյալն է. կրավորական կառույցի նախադասություններում գործողություն կատարողը ոչ ուղղակի, այլ անհայտ հասցեատերն է, իսկ քաղաքական տեքստը (նաև՝ խոսքը) որոշակիություն, կոնկրետություն, պարզություն է պահանջում՝ «Ընտրության արդյունքները կեղծվել են», «Պաշտոնական պարտականությունները կատարելիս ցուցաբերվել է անփութություն», «ՌԴ ՊՆ հայտարարում է. «Լեռնային Ղարաբաղում արձանագրվել է հրադադարի ռեժիմի խախտում» և այլն:

Անդրադառնանք կոպտասությանը. ըստ Էդ. Աղայանի՝ այն բնորոշվում է այսպես. «Տվյալ ասույթի համար պատշաճ ու սովորական բառի կամ արտահայտության փոխարինումը գռեհիկ՝ կոպիտ բառով կամ արտահայտությամբ՝ ոճական նկատառումներով (դիսֆեմիզմ)» (1976, էջ 759):

Լեզվական բարեկրթության խնդիրը գործնական առումով առնչվում է և՛ մեղմասությանը, և՛ կոպտասությանը. առաջինի դեպքում քննության առնվող կամ հիշատակվող ոչ հաճելի թեմաները (էթնիկ, կրոնական, սեռական փոքրամասնություններ, հիվանդություններ և այլն) կարող են հաղթահարվել մեղմասութային կիրառություններով, իսկ կոպտասության դեպքում հաղորդակցական գործառույթը (մասնավորապես քաղաքական հռետորաբանության մեջ), թեև արտաքին արտահայտչական կողմին, այնուամենայնիվ բովանդակային պլանում գրեթե անկարևոր է դառնում, քանզի մանիպուլյատիվ բնույթ է կրում, այն է՝ ուղղակի իմաստով չի բնութագրում առարկան, երևույթը, այլ գնահատում է դրանք անձին, գաղափարը, նսեմացնելու, վիրավորելու նպատակով:

Կոպտասությունը մարդկանց մտքերի վրա ազդելու հուզազգացական գործառույթ ունի (սա մասնավորապես լայնորեն կիրառվում է լրագրողների և քաղաքագետների կողմից). դա հնարավորություն է տալիս ուղղորդել լսարանին՝ ակնկալելով իրենց շահավետ տեսակետի ներազդում և տարածում:

Ի վերջո, երկուսն էլ լեզվական տաբուները հաղթահարելու միջոցներ են և բացի այս՝ կարող են մեկը մյուսով փոխարինվել. նույն համատեքստում կարող են գործածվել և՛ մեղմասությունը, և՛ կոպտասությունը. վերջինիս կիրառությունը կախված է նաև արտաքին գործոններից. դրանք են՝ խոսողի զգացական-հոգեբանական վիճակը, դաստիարակությունը, խոսքային իրադրությունը, միջավայրը և այլն: Կոպտասությունը հաղորդակցվողի ներքին կոնֆլիկտայնության ցուցիչն է, սոցիալ-հոգեբանական խնդիր, որը, փոխկապակցված լինելով սեփական շահերի, ընկալումների, նպատակների հետ, հարցի լուծումը տեսնում է բացասական վերաբերմունքի գեներացման մեջ, ինչը վերածում է անընդունելի վարքագծի, որը ներհակ է լեզվի մշակույթի հաղորդակցական նորմերին: Կոպտասությունների կուտակումը ձևավորում է ագրեսիվ պահվածք և ատելության խոսք:

Հրապարակային խոսքում, քաղաքական բանավեճերում «թքած ունենալ» արտահայտությունը գռեհիկ է և ոչ բարեկիրթ՝ «Թքած ունեմ նրա վրա», «Ո՞վ է թքում քո կրթության վրա» և այլն: Ասվածը միանշանակ չէ. այն անձի անհավասարակշիռ վիճակի, սեփական տեսակետի հանդեպ անվստահության, ուրիշի կարծիքի հանդեպ չարակամության, իրավիճակի անորոշության, նեղսրտության, հասարակական ոչ բավարար կարգավիճակի, սեփական կարողությունների ոչ համարժեք գնահատման, նաև՝ գերազանցության, խոսքային իրադրությունը սրելու բազում այլ բնութագրումներ ունի: Բովանդակային առումով չեզոք ոճին պատկանող անվանողական արժեք ունեցող որոշ բառեր գործառության այլ միտվածություն և իմաստային այլ զուգորդություն կարող են ունենալ, այդ թվում նաև բացասական, երգիծական՝ կլան (նախնադարում նշանակում էր տոհմային համայնք, այժմ՝ քաղաքական, նյութական և այլ շահերով իրար հետ կապված մարդկանց խումբ), կառավարող ռեժիմ, քաղաքական մուտանտ, մանկուրտ, վեցերորդ պալատի հայրենասերներ, ժեխ, զոմբի, պիցցայակեր, լափամանից օգտվողներ, բիոզանգված և այլն: Վերոհիշյալ բառերի և արտահայտությունների ենթատեքսը հասկանալի է: Սրանք կոնկրետ բովանդակություն և հասարակայնորեն ճանաչելիություն ունեցող բառեր, արտահայտություններ են, որոնք այս վերջին ժամանակներում որոշակիորեն հաստատվել են արդի խոսույթում և բովանդակային առումով տարբերակված ձևով արտացոլվել են

հաղորդակցական ընկալումներում՝ ունենալով նաև հոգեբանական-զգացական նշանակալի ենթատեքստ:

Ուսումնասիրողները նշում են կոպտասության երեք հիմնական գործառույթ, այն է՝ սովորական (չեզոք) բառի կամ արտահայտության՝ գռեհիկ, կոպիտ բառով փոխարինելը, դրա հետևանքով խոսքի արտահայտչականության, հուզազգացական ազդեցության մեծացում և վերջապես մանիպուլացիոն. վերջինս իրականությունը և դրա ընկալումը նենգափոխող, մարդկանց վարքագիծը կառավարելի դարձնելու միջոց է:

Ե՛վ մեղմասությունը, և՛ կոպտասությունը ընդհանրական են մի գործառույթի շրջանակում. երկուսն էլ թաքցնում են բառի, արտահայտության իրական նշանակությունը՝ ձևավորելով ցանկալի, սակայն իրականության վերացարկված պատկերացում, միայն ի տարբերություն մեղմասության, կոպտասությունն ուղղորդում է որոշակի՝ տվյալ դեպքում բացասական ընկալում մեկի, մի բանի կամ ամեն ինչի նկատմամբ:

Կոպտասությունների դասակարգման հարցում որոշ վերապահումներ կան:

Արտահայտության և բովանդակության պլանում երբեմն դժվար է տարանջատել գռեհկաբանությունը, հասարակաբանությունը, ժարգոնային բառերը կոպտասությունից. դրանք կարող են համընկնել՝ լացել-զռռալ, ուտել-լափել-խժռել և այլն: Կոպտասությունները ցածր ոճ և ընդգծվող արտահայտչականություն ունեցող բառեր, արտահայտություններ են, որոնք հրապարակային, գեղարվեստական, ժողովրդախոսակցական հաղորդակցման ոլորտներում լայն կիրառություն ունեն:

Թեմատիկ բնույթով և կիրառական ոլորտների բազմազանությամբ կոպտասությունը զիջում է մեղմասությանը:

Բառային-իմաստային մեծ խումբ են կազմում մահվանը, հիվանդություններին, մարդկային արատներին առնչվող կոպտասությունները:

Այն խոսքը ավելի արտահայտչական դարձնելու միջոց է. ուժեղացնելով նրա հուզազգացական ներազդեցությունը՝ ընտրվում է հաղորդակցման նպատակին հասնելու ոչ ազնիվ՝ մանիպուլացիոն ճանապարհը: Ըստ այսմ խախտվում են բարեկրթության նորմերը, և վարքագծային առումով հաղորդակցումը անընդունելի է դառնում: Եվ ընդհանրապես, բառը և բառակապակցությունը ընկալվում են որպես կոպտասություն, եթե սովորական բնույթ ունեցող գործածությունից վերածվում են ներգործող ազդեցություն ունեցող գործոնի, այն է՝

քաղաքական խոսքը նպատակաուղղելով դեպի ոչ կառուցողական և ոչ ռացիոնալ դաշտ:

Ըստ սոցիոլեզվաբանների՝ այսօրվա թվային դարաշրջանում առանձնակի է ընկալվում սոցիալական գործոնով պայմանավորված լեզվի և հասարակական հաղորդակցական փոխկապակցվածությունը. վերջինս նաև բավականաչափ խնդիրներ է առաջադրում մեր օրերում: Փոխվել է հաղորդակցվողների խոսքային վարքագիծը՝ երբեմն ձեռք բերելով ատելության և թշնամանքի ընդգծված բացասական երանգներ: Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման ժամանակակից տեմպերը և համընդհանուր հասանելիությունը իրենց կնիքն են դրել փոխադարձ շփումների մշակույթի վրա, որն էլ ապահովում է ցանցային հաղորդակցման նոր որակ՝ ցավոք, ատելության խոսքի մեծ չափաբաժնով: Պատճառները տարբեր են՝ հասարակության շերտավորում, բևեռվածություն, շահերի բախում, կրթական ցածր մակարդակ, ինքնահաստատման դրսևորում և այլն: Սեփական կարծիքը մեկին պարտադրելու նպատակը մեկն է՝ վիրավորել մարդուն, ստորացնել նրա արժանապատվությունը: Հայհոյախառն խոսքը, գռեհկաբանությունները, անեծքները շփումների անձնական տիրույթից դուրս են գալիս. այն հրապարակայնացվում է, ինչը անընդունելի է: Ըստ որում, վիրավորանք է հնչում ոչ միայն տվյալ անձի, այլև այն խմբի հասցեին, որին պատկանում է տվյալ անձնավորությունը՝ անտեսելով տարիքային, կրոնական էթնիկ պատկանելությունը: Սոցիալական կայքերում անհանդուրժողականությունը՝ հաճախ հայհոյանքի տեսքով, մեծ չափերի է հասնում. սա միտումնավոր չարամտություն է: Խնդիրն ունի նաև հոգեբանական ենթատեքստ. քննարկումներում դիմացինը դիտարկվում է ոչ թե որպես մրցակից, այլ թշնամի: Ի դեպ, ագրեսիվ կեցվածքը և խոսքը ի սկզբանե ուղեկցող են եղել մարդու՝ հասարակական կյանքում և հասարակության մեջ կեցության և ինքնաճանաչման ընկալմանը. դրա մեջ գոյաբանական պայքարի նախապայման կա: Խոսքային այս համատեքստում կարևորվում են մեղմասության դերը և էթիկական նորմերի պահպանումը: Կոպտասությունը նախընտրելի արտահայտչական միջոց է դառնում, եթե նպատակը դիմացինին շփոթեցնելը, անհարմար վիճակի մեջ դնելն է: Դիրքորոշումը կոպտացնելու որոշակի դիտավորություն ունեցող կիրառություն է՝ համաձայնեցված մտադրություններին:

Իմաստային և կիրառական տեսանկյունից խոսքում տարբեր (երբեմն՝ հակադիր) գործառույթներ ունեցող արտահայտչական այս միջոցները, ըստ էության, գործնական առումով գիտակցական ընտրությամբ պայմանավորված լեզվառճական միավորներ են՝

իրականության և իրողությունների ընկալման վերջարդյունք ապահովելուն նպատակաուղղված մտայնությամբ:

Որպես ամփոփում նկատենք, որ ոճական արտահայտչական այս միջոցները որոշակիորեն արտացոլում են տվյալ ժողովրդի պատմական-մշակութային զարգացման ընթացքը և առանձնահատկությունները, որոնք միշտ չէ, որ կարող են համընկնել կամ ընկալելի լինել այլ լեզվակիրների միջավայրում: Դրանք կրում են ժողովրդի էթնիկ նույնականության դրոշմը և հիմնավորապես մտել ու տարածվել են լեզվական-հաղորդակցական մակարդակներում:

Երկու դեպքում էլ խոսքի արտահայտչականությունը կապված է բովանդակության կամ հասցեատիրոջ հանդեպ վերաբերմունքի ցուցադրականության հետ. միայն մեղմասության կիրառությամբ առարկան, իրականությունը, մարդկային գործունեության և փոխհարաբերությունների ոլորտն է (բնականաբար այն վերաբերում է որոշակի թեմաների և բնագավառների) հնարավորինս պահպանում «չեզոքությունը», իսկ կոպտասության պարագայում արտահայտվելու շարժառիթը կամ մտայնությունը ձևավորում և արտահայտում է ընդգծված բացասական սուբյեկտիվ գնահատական՝ հուզազգացական տարբեր որակումներով: Տվյալ երևույթների համադրումը, ավելի հաճախ՝ հակադրումը քննության բազմազանության և յուրահատկությունների բացահայտման հնարավորություն է ստեղծում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ
REFERENCES

1. Աղայան Է. (1976), Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, „Հայաստան” հրատարակչություն, 929 էջ:
   Aghayan E'. (1976), Ardi hayereni bacatrakan bar'aran, Erevan, „Hayastan” hratarakchowt'yown, 929 e'j: (In Armenian)
2. Աղայան Է. (1967), Լեզվաբանության ներածություն, Երևան, „Միտք” հրատարակչություն, 638 էջ:
   Aghayan E'. (1967), Lezvabanowt'yan nerac'owt'yown, Erevan, „Mitq” hratarakchowt'yown, 638 e'j:
3. Եզեկյան Լ. (2003), Հայոց լեզվի ոճագիտություն, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 375 էջ:
   Ezekyan L. (2003), Hayoc lezvi otwagitowt'yown, Erevan, Erevani hamalsarani hratarakchowt'yown, 375 e'j:
4. Խլղաթյան Ֆ. (2000), Ոճաբանական բառարան, Երևան, „Զանգակ” հրատարակչություն, 188 էջ:

Xlghat'yan F. (2000), Otwabanakan bar'aran, Erevan, „Zangak" hratarakchowt'yown, 188 e'j:

5. Պողոսյան Պ. (1990), Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, գիրք I, 424 էջ:
Poghosyan P. (1990), Xosqi mshakowyt'i ev otwagitowt'yan himownqner, Erevan, Erevani hamalsarani hratarakchowt'yown, girq I, 424 e'j:
6. Սուքիասյան Ա. (2003), Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, Երևան, Երևանի համալսարանի հրատարկչություն, 1237 էջ:
Sowqiasyan A. (2003), Hayoc lezvi homanishneri bacatrakan bar'aran, Erevan, Erevani hamalsarani hratarkchowt'yown, 1237 e'j:
7. Ավետիսյան Յ. (2015), Խոսքի արտահայտչականություն. մեղմասություն և փոխարկում, Երևան, «Բանբեր» Երևանի համալսարանի հրատարակչություն, №1 (16), էջ 67-75:
Avetisyan Y. (2015), Xosqi artahaytchakanowt'yown. meghmasowt'yown ev p'oxarkowm, Erevan, «Banber» Erevani hamalsarani hratarakchowt'yown, №1 (16), e'j 67-75:
8. Ахманова О. (1966), Словарь лингвистических терминов, М., 669 с.
Ahmanova O. (1966), Slovar' lingvisticheskih terminov, M., 669 s. (In Russian)
9. Зверева Е. (2008), Основы культуры речи, М., 219 с.
Zvereva E. (2008), Osnovy kul'tury rechi, M., 219 s. (In Russian)
10. https://fundamental-research.ru/ru/article/view?id=36992 (Դիտված՝ 21.08.2023)
11. https://avtoram.com/evfemizm/ (Դիտված՝ 18.09.2023)
12. https://moluch.ru/archive/361/80706/ (Դիտված՝ 20.11.2023)
13. https://dzen.ru/a/YLhk2c4gW2ZfG_DF (Դիտված՝ 10.01.2024)

СУСАННА ГАБРИЕЛЯН - ЭВФЕМИЗМЫ И ДИСФЕМИЗМЫ: СРЕДСТВА ВЫРАЗИТЕЛЬНОСТИ РЕЧИ

Ключевые слова: *эвфемизмы, дисфемизмы, эмоциональная выразительность, функция, средства и цели выразительности, сферы употребления*

В рамках данной статьи рассматриваются эвфемизмы (euphemism) и дисфемизмы (dysphemism). Цель исследования- выявление языковых и стилистических особенностей упомянутых стилистических фигур, а также частотности их употребления, тематического разнообразия, функций в той или иной сфере. Данные языковые единицы исследуются в

конкретной лингвосоциальной среде, в диапазоне употребления в качестве единиц выражения вежливости или, наоборот, невежливости, в аспекте уместности или неуместности.

Практическая и актуальная значимость данных явлений обуславливает методы исследования, среди которых – сопоставительный, аналитический, описательный. Особое значение имеет то, что вышеуказанные единицы не предполагают стилистических приемов замены того или иного слова либо фразы другими элементами в целях завуалирования, смягчения или, наоборот, усиления или подмены смысла сказанного (манипулятивное поведение), а являются проявлением языкового прагматизма, посредством которого может быть достигнут желаемый эффект, заключающийся в расширении истинных возможностей средств выразительности и решения определенных задач.

SUSANNA GABRIELYAN - EUPHEMISMS AND DYSPHEMISMS: THE EXPRESSIVE MEANS OF SPEECH

Keywords: *euphemism, dysphemism, expressiveness, function, expressive means and goals, fields of application*

The present article offers an in-depth exploration of two linguistic phenomena: euphemism and dysphemism among a myriad of expressive tools, aiming to shed light on their linguistic and stylistic characteristics, frequency of use, thematic diversity and functional applications. These linguistic units are studied within a specific linguistic and social context, examining their use as expressions of politeness or, conversely, impoliteness, and their appropriateness or inappropriateness."

Employing a blend of comparative, analytical, and descriptive methods, this study challenges the conventional perception of euphemism and dysphemism solely as veils or manipulative tools. Instead, it highlights their essence as manifestations of linguistic pragmatism. In this light, they are not seen merely as tools masking or substituting one word or phrase for another in a manipulative manner. Rather, they emerge as integral elements that play an instrumental role in raising the emotional and expressive overtones of speech, ultimately contributing to the achievement of communicative goals.

Ներկայացվել է՝ 26.02.2024 թ.
Գրախոսվել է՝ 06.05.2024 թ.